ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գ. Ասլամազյանի (լիազորագիր՝ տրված 22.03.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3661-2021 գրությամբ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 09.03.2021թ. թիվ ՊՆ/02/1186-2021 գրության հիման վրա 15.03.2021թ. թիվ 26/26-1/3661-2021 գրությամբ նախաձեռնել է «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի շրջանակներում 23.03.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է հետևյալը.

«Ընկերության հայտը 35-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմքով, որ անվադողի բեռնվածությունը հրավերով սահմանված է եղել ոչ պակաս 1180 կգ, մինչդեռ Ընկերության կողմից, որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, նշվել է՝ 1160 կգ, որը եղել է տեխնիկական սխալ, քանի որ այդ չափաբաժնով պահանջվող անվադողի նվազագույն բեռնվածությունը սկսվում է 1180 կգ-ից՝ ներկայացնելով անվադողի բեռնվածության ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն»:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.03.2021թ. թիվ ՊՆ/02/1186-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում բոլոր չափաբաժինների մասով (1-ին, 29-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ չափաբաժիններ) բացակայում են անվադողի սահմանելի արագության ինդեքսը, անվադողի բեռնվածության ինդեքսը, անվադողի բեռնվածությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, սակայն 35-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ

վերջինս անվադողի բեռնվածությունը նշել է 1160, այնինչ Ընթացակարգի հրավերով սահմանված է ոչ պակաս 1180: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի հայտը՝ 35-րդ չափաբաժնի մասով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի շրջանակներում 23.03.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, սակայն 35-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ վերջինս անվադողի բեռնվածությունը նշել է 1160, այնինչ Ընթացակարգի հրավերով սահմանված է ոչ պակաս 1180:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3661-2021

գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.03.2021թ. թիվ ՊՆ/02/1186-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի շրջանակներում «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի հայտնած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին

ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար անվադողերի և կուտակիչ մարտկոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում բոլոր չափաբաժինների մասով (1-ին, 29-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ չափաբաժիններ) բացակայում են անվադողի սահմանելի արագության ինդեքսը, անվադողի բեռնվածության ինդեքսը, անվադողի բեռնվածությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, սակայն 35-րդ չափաբաժնի մասով ներկայացված շտկումը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ վերջինս անվադողի բեռնվածությունը նշել է 1160, այնինչ Ընթացակարգի հրավերով սահմանված է ոչ պակաս 1180:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր) համաձայն՝ 35-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ ավտոմեքենաների անիվների /անվադող 265/60R18/, ձեռբերման համար սահմանվել է անվադողի բեռնվածությունը /կգ ոչ պակաս 1180:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հետևյալ տեսքով.

Հավելված N 1.1
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ
առաջարկվող ապրանքի ամբողջական

«Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

չ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիր
35	Ավտոմեքենայի անիվներ	ձմեռային, ՋԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար

Եվ այսպես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որտեղ 35-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի՝ անվադողի բեռնվածությունը նշել է 1160 կգ, մինչդեռ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրի համաձայն՝ սահմանվել է անվադողի բեռնվածությունը /կգ ոչ պակաս 1180, այսինքն՝ Ընկերության կողմից ներկայացվել է հրավերով սահմանված բեռնվածությունից տարբերվող բեռնվածություն, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ ՍՑ-ՆԳ-2021/71 ծածկագրով ընթացակարգի քննության ընթացքում 23.03.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի ընթացքում հայտնած դիրքորոշմանը, այն է՝ «*35-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմքով, որ անվադողի բեռնվածությունը հրավերով սահմանված է եղել ոչ պակաս 1180 կգ, մինչդեռ Ընկերության կողմից, որպես շտկում ներկայացված հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, նշվել է՝ 1160 կգ, որը եղել է տեխնիկական սխալ, քանի որ այդ չափաբաժնով պահանջվող անվադողի նվազագույն բեռնվածությունը*

սկսվում է 1180 կգ-ից», ինչպես նաև անվադողի բեռնվածության ցուցանիշների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությանը, ապա արձանագրում եմ, որ վերջինիս կողմից վերաբերելի ապացույց չի ներկայացվել, որով կփաստվեր դիրքորոշմամբ հայտնածը: Ընդ որում՝ այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է ՍՑ-ՆԳ-2021/71 ընթացակարգի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.03.2021թ. թիվ 26/26-1/3661-2021 գրությամբ «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մարշալ Լենդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**